ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5 (10)

ՀՀ կրթության տեսչական մարմնի կառավարման խորհրդի նիստի

ք.Երևան 28 նոյեմբերի 2019թ.

Ժամը 16[00]

ՀՀ կրթության տեսչական մարմնի կառավարման խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) նիստին ներկա էին՝

Ա. Հարությունյան	- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար (խորհրդի նախագահ)
Ա. Ասոյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար
Ա. Ավանեսյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Ք. Գրիգորյան	- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Ա. Հայրապետյան	- ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Ս.Պոյան	- «Դասարան» կրթական ծրագրի հիմնադիր նախագահ
Ա. Բախչյան	- «Հանրային դիվանագիտություն» հասարակական կազմակերպության նախագահի կրթության հարցերով խորհրդական
Ա. Մարտիրոսյան	- «Դասավանդիր, Հայաստան» կրթական հիմնադրամի զարգացման գծով տնօրեն

Բացակայում էր

Բ. Փափազյան	- «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի խորհրդի անդամ

Մասնակցում էին

Ալ. Շագաֆյան	- ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավար
Ա. Գևորգյան	- խորհրդի քարտուղար

Հրավիրվածներ

Տ. Հակոբյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ
Ռ. Սմբատյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի կրթության, առողջապահության և աշխատանքի ոլորտների համակարգման և մեթոդաբանության վարչության պետի պաշտոնակատար
Ռ. Գալստյան	- ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ
Ն. Հովհաննիսյան	- ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ
Զ. Միքայելյան	-ՀՀ կրթության տեսչական մարմնի ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման, վերլուծությունների և գնահատման վարչության պետ
Լ. Մաթևոսյան	- ՀՀ կրթության տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի պետ

ՕՐԱԿԱՐԳ

Հարց 1. ՀՀ կրթության տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) ներքին կարգապահական կանոնները:

Հարց 2. Տեսչական մարմնի դիմում-բողոքների ներկայացման օրինակելի ձևը:

Հարց 3. Տեսչական մարմնի (ՀՀ կրթության պետական տեսչության) գործունեության ոլորտում 2017-19թթ. հանրությունից ստացված դիմում/բողոքների թվաքանակի և բովանդակության փոփոխության պատճառների վերլուծություն:

Հարց 4. Տեսչական մարմնի 2019 թվականի 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակների վերաբերյալ հաշվետվություններ:

Հարց 5. Տեսչական մարմնի 2020թ. աշխատանքային ծրագրի նախագիծը:

Հարց 6. Տեսչական մարմնի 2020թ. ստուգումների ծրագրի նախագիծը:

Հարց 7. Տեսչական մարմնի 2019 թվականի 3-րդ եռամսյակում ստացված դիմում-բողոքների վերաբերյալ հաշվետվություն:

Հարց 8. Տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի գործունեության 2020 թվականի ծրագրի նախագիծը:

Հարց 9. Տեսչական մարմնի 2019 թվականի 3-րդ եռամսյակի կատարողականի գնահատում:

Հարց 10. Տեսչական մարմնի կառավարման խորհրդի աշխատակարգի հաստատում:

Հարց 11. Տեսչական մարմնի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության (դպրոցի) զարգացման ծրագրի մշտադիտարկման» և «ՀՀ կրթության տեսչական մարմնում հարուցված վարչական վարույթի մասնակիցների ծանուցման թերթիկ» ձևաթղթերի հաստատում:

Հարց 12. Տեսչական մարմնի հաստիքացուցակում փոփոխությունների առաջարկ:

Հարց 13. «Կրթության բնագավառի պետական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի հայեցակարգի և տեսչական մարմնի վերահսկողական լիազորությունների քննարկում:

Այլ հարցեր

Նիստը վարում էր խորհրդի նախագահ **Ա. Հարությունյանը**:

Ալ. Շագաֆյանը առաջարկեց օրակարգի հարցերը քննարկել ըստ կարևորության՝ 5-րդ, 6-րդ, և 8-րդ հարցեր, որոնք հրատապ են և «Ստուգումների մասին» ՀՀ օրենքի պահանջով պետք է դեկտեմբերի 1-ի դրությամբ հաստատված լինեն և հրապարակվեն:

Ա. Հարությունյանի առաջարկով խորհուրդը քվեարկությամբ՝ **8 կողմ ձայնով** միաձայն հաստատեց օրակարգը:

Ալ. Շագաֆյանը սկսեց 5-րդ հարցից՝ տեսչական մարմնի 2020թ. աշխատանքային ծրագրից, նշելով, որ օրենքի պահանջով աշխատանքային ծրագրում անդրադարձ է արվել նախորդ տարվա բացահայտումներին ու դրա վերլուծությանը, և ռիսկայնության հիման վրա՝ նոր ծրագրով առաջարկներ են ներկայացվել: Այս ծրագրում, որպես անցած երկու տարիների հիմնական խնդիր հանրակրթության մասով շարունակում է մնալ կադրային հարցը, այն է՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի պահանջը՝ ուսուցիչների որակավորման համապատասխանությունը զբաղեցրած պաշտոնին: Այդ ուղղությամբ կատարվել է բավականին աշխատանք և ներկայացվել են լուծման առաջարկներ: Հաշվի առնելով, որ ՀՀ ԿԳՄՍ նախարարությունում ուսուցչի պաշտոնի համապատասխանության վերաբերյալ հարցի շուրջ քննարկում է կազմակերպվում՝ տեսչական մարմնի մասնակցությամբ, ուստի 2020թ. աշխատանքային ծրագրում այդ խնդիրը, որպես այդպիսին չի դրվել, այլ հանրակրթության մասով շեշտադրվել է բովանդակային նշանակությունը, առավելապես կարևորելով «Մաթեմատիկա» և «Ինֆորմատիկա» առարկաների իրավիճակն ու դրվածքը դպրոցում:

Տեսչական մարմինը նպատակահարմար է գտնում վերահսկողական գործառույթների միջոցով ոչ միայն պարզել հանրակրթության ոլորտում «Մաթեմատիկա» («Հանրահաշիվ», «Երկրաչափություն») և «Ինֆորմատիկա» առարկաների ուսուցման և ուսումնառության վիճակը, այլև՝ մանկավարժական և մեթոդական աջակցություն ցուցաբերել նշված առարկաների ուսուցիչներին:

Այս գործառույթի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է ստեղծել մասնագիտական և մանկավարժամեթոդական բարձր պատրաստվածություն ունեցող մասնագետների (դասալսողների) խումբ ինչպես նաև նշված առարկաների գրավոր առաջադրանքների շտեմարաններ:

Տեսչական մարմնի կողմից 2019 թվականին իրականացված վերահսկողական գործառույթների ընթացքում ուսումնական հաստատությունների 7-11-րդ դասարաններում տրված գրավոր աշխատանքների արդյունքում ստացված պատկերը լավագույնս ցույց է

տալիս «Մաթեմատիկա» առարկայի ուսումնառության ցածր մակարդակը: Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ «բավարար» գնահատված սովորողների մեծ մասի գնահատականը «բավարար»-ի և «անբավարար»-ի սահմանային մակարդակում է և, որ «Մաթեմատիկա» առարկան շատ տեղերում ըստ տեսչական մարմնի կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքների, բավական տխուր պատկեր ունի:

Ներկայացվող ծրագրի նպատակը բխում է տեսչական մարմնի նպատակներից և խնդիրներից:

Տեսչական մարմնի նպատակն է՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով տեսչական մարմնի վերահսկողության ոլորտում (նախադպրոցական կրթություն, հանրակրթություն, նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն) օրենսդրության պահանջների պահպանման ապահովումը, կրթության որակի բարձրացումը և կրթական ծրագրերի յուրացման ապահովմանն աջակցումը:

Տեսչական մարմնի խնդիրներն են՝ վերահսկողության ոլորտում ռիսկերի կառավարումը և Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների պահպանումը, ինչպես նաև նշված ոլորտներում կանխարգելիչ միջոցառումների իրականացումը:

Տեսչական մարմնի 2020 թվականի տարեկան գործունեության ծրագրի նպատակը սահմանվել է՝ հիմք ընդունելով ՀՀ կրթության բնագավառում տիրող առկա վիճակը, տեսչական մարմնի նախորդ և ընթացիկ տարիներին իրականացրած վերահսկողական գործառույթների արդյունքում կուտակված տեղեկատվությունը և ռիսկերի գնահատման բազայի թարմացված տվյալները:

Ծրագրի խնդիրներից բխող միջանկյալ արդյունքներն ըստ թիրախների

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ: Տեսչական մարմնի 2020թ. ստուգումների տարեկան ծրագրում ներառված *տարատարիք* խմբեր ունեցող ՆՈՒՀ-երը ունեն համապատասխան պատկերացում երեխայի տարիքային խմբին համապատասխան միջավայր ստեղծելու և ապահովելու ուղղությամբ:

Թիրախներ՝ *Մանկապարտեզների խմբերում ընդգրկված երեխաների համար, որոնց տարիքները չեն համապատասխանում փվյալ տարիքային խմբին, չափորոշչի համապատասխան որակական պահանջները չեն իրականացվում:*

Հիմնավորում՝ *Տարատարիք (մի խմբում առկա են երկու կամ ավելի տարիքային խմբերի երեխաներ) խմբերում հիմնականում տարբերակված (տարիքային հենքին համապատասխան) ուսուցում չի իրականացվում, չափորոշչի համապատասխան որակական պահանջները չեն իրականացվում, ինչը խոչընդոտ է երեխաների համակողմանի զարգացման համար: Տարատարիք խմբեր ունեցող նախադպրոցական ուսումնական*

հաստատություններում հիմնականում առկա են տարիքային խմբին համապատասխան ծրագրերը, ինչի պատճառով էլ փաստաթղթային ստուգումների արդյունքում առկա խնդիրները հնարավոր չի լինում վերհանել: Միևնույն քննարկումների ընթացքում համապատասխան լուսաբանման մարմինների ներկայացուցիչները իրենք են փաստում, որ չկան տարատարիք խմբերին համապատասխանող ծրագրեր, իսկ յուրաքանչյուր տարիքային խմբի հետ առանձին աշխատանքը այնքան էլ իրատեսական չէ: << նախադպրոցական ուսումնական հաստատություններից ստացված տեղեկատվության համաձայն 2019 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ տարատարիք խմբեր ունեն 700 մանկապարտեզների 280-ը (40%), իսկ տարատարիք խմբերում տարիքային խմբերի թիվը 3 և ավելի է 109-ում (16%): ԿՏՄ 2020 թվականի ստուգումների ծրագրում ներառված 12 քաղաքային նախադպրոցական ուսումնական հաստատություններում առկա են տարատարիք խմբեր: Այս հաստատություններում անհրաժեշտ է փաստաթղթային ստուգման հետ մեկտեղ իրականացնել նաև պատասխանների լսումներ (համապատասխան մասնագետների հետ համատեղ) առկա խնդիրները վերհանելու նպատակով:

Տեսչական մարմնի 2020թ. ստուգումների տարեկան ծրագրում ներառված *բոլոր* ՆՈՒՀ-երը ունեն ուսումնադաստիարակչական գործունեության գնահատման համապատասխան կարողություններ:

Թիրախներ՝ *Մանկապարտեզի ուսումնադաստիարակչական գործունեությունը թե տնօրենի, թե մեթոդիստի և մանկավարժական աշխատողների պաշտոնեական պարտականությունների մասով:*

Հիմնավորում՝ *Միայն կրթության բնագավառը կարգավորող << օրենսդրության պահանջների խախտումների արձանագրումը ստուգաթերթերի միջոցով հնարավորություն չի տալիս գնահատել նախադպրոցական ուսումնական հաստատության ուսումնադաստիարակչական գործունեությունը: Ուստի ստուգումների ընթացքում նաև ուսումնադաստիարակչական գործունեության ձևաթղթի կիրառումը հնարավորություն կտա ԿՏՄ-ին, ինչպես նաև հաստատությանը գնահատել մանկապարտեզի ուժեղ կամ թույլ կողմերը:*

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ: Տեսչական մարմնի 2020թ. ստուգումների տարեկան ծրագրում ներառված ավագ և քաղաքային դպրոցներն ունեն համապատասխան պատկերացում ավելի որակյալ ուսուցում և ուսումնառություն իրականացնելու ուղղությամբ:

Թիրախներ՝ *մնացորդային գիտելիքների մակարդակ մաթեմատիկա և ինֆորմատիկա առարկաներից, դպրոցի գործունեության համապատասխանություն կրթության բնագավառը կարգավորող << օրենսդրության պահանջներին, սովորողների, ծնողների կողմից կրթական գործընթացի գնահատում:*

Հիմնավորում՝ *Սովորողների մոտ մնացորդային գիտելիքների (մնացորդային գիտելիքներ են համարվում այն գիտելիքները, կարողություններն ու հմտությունները, որոնք պահպանվել են սովորողի մոտ նախորդ դասարանի կրթական ծրագիրը հաջողությամբ հաղթահարելուց հետո) մակարդակը ուսումնական հաստատություններում ստուգվում են նախորդ դասարանի անցած նյութին համապատասխան: Կրթության բնագավառը կարգավորող << օրենսդրության պահանջների կիրարկման նկատմամբ վերահսկողության միջոցով ԿՏՄ-ն նպաստում է դպրոցներում կրթության որակի երաշխավորման մեխանիզմների առկայությանը, ինչպես նաև խթանում է կրթության որակի բարելավմանը:*

Տեսչական մարմնի 2020թ. ստուգումների տարեկան ծրագրում ներառված բոլոր դպրոցներն ունեն կրթական գործընթացի գնահատման համապատասխան

կարողություններ

Թիրախներ՝ *Դպրոցի կրթական գործունեությունը՝ թե փնտրենի, մանկավարժական աշխատողների պաշտոնեական պարտականությունների կատարման, թե սովորողների ուսուցման և ուսումնառության մասով:*

Հիմնավորում՝ *Միայն կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումների արձանագրումը սպուգաթերթերի միջոցով հնարավորություն չի տալիս գնահատել դպրոցի կրթական գործունեությունը: Ուստի սպուգումների ընթացքում նաև կրթական գործընթացի գնահատման ձևաթղթի կիրառումը հնարավորություն կտա ԿՏՄ-ին, ինչպես նաև հասկացությանը գնահատել դպրոցի ուժեղ կամ թույլ կողմերը:*

ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐՈՒԹՅՈՒՆ: Տեսչական մարմնի 2020թ. ստուգումների տարեկան ծրագրում ներառված ուսումնական հաստատություններն ունեն համապատասխան կարողություններ՝ առավել արդյունավետ կառավարում և կրթական գործընթաց իրականացնելու համար:

Թիրախներ՝ *համապատասխան որակավորում և պատրաստվածություն ունեցող մանկավարժական և վարչական համակազմ, որակյալ ուսուցման ապահովում՝ մեթոդների, ուսումնական պլանների, կրթական չափորոշիչների և ծրագրերի միջոցով, վերապատրաստումներ խորհրդի և փնտրենի գործառույթների որակի ապահովման գործընթացում*

Հիմնավորում՝ *Մանկավարժական և վարչական աշխատողների՝ համապատասխան որակավորում ունենալը ենթադրում է, որ անձի* ***մասնագիտական գիտելիքները****, կարողություններն ու հմտությունները հնարավորություն կտան ստանձնված կարգով իրականացնել պաշտոնի նկարագրով նախատեսված պարտականությունները:*
Կառավարման խորհրդի և գործադիր մարմնի՝ կրթության բնագավառը կարգավորող օրենսդրությանը համապատասխան գործունեությունը կապահովի արդյունավետ կառավարում և ղեկավարում:

Ա. Հարությունյանին և Ա. Բախշյանին հետաքրքրեց, թե ինչ գործիքակազմով են ստուգելու «Մաթեմատիկա» և «Ինֆորմատիկա» առարկաները:

Ալ. Շագաֆյանը շարունակեց, որ դասալսման պրակտիկան ցույց է տվել, որ դասալսողներ հրավիրելու խնդիր կա, քանի որ տեսչական մարմինը ֆինանսական միջոցներ չունի և չի կարող վճարել մասնագետների գործուղման ծախսերը:

Նախորդ տարում **«Դասավանդիր Հայաստան» (Teach for Armenia)** կազմակերպության հետ համատեղ լրամաշակվել է դասալսման գործիքակազմը, որի արդյունքում 2020թ-ի տարեկան ծրագրով և՛ կլինեն դասալսումներ, և՛ կտրվեն գրավորներ՝ կիրառելով ձևաթղթերն ու ստուգաթերթերը: Փաստացի ստուգումների պլանով նախատեսված 40 դպրոցների մասով կտրվի համեմատական ՀՀ-ում «Մաթեմատիկա» և

«Ինֆորմատիկա» առարկաների վիճակի վերաբերյալ, իսկ դրանցից առնվազն 16-ում (քաղաքային դպրոցներում) կիրականացվեն նաև դասալսումներ:

Ա. Բախշյանը հարցրեց, թե ի՞նչ մեթոդով են ստուգվելու «Ինֆորմատիկա» առարկայի կարողություններն ու հմտությունները, եթե դասագրքերը դեռևս ամբողջությամբ նորացված չեն և ովքեր են այդ դասալսողները:

Ալ. Շագաֆյանը պատասխանեց, որ 2020 թվականի ծրագիրը հաստատվելուց հետո դեկտեմբեր ամսից կսկսվեն փորձառու մասնագետների հավաքագրումն ու նրանց ներկայացվող պահանջների առաջադրման աշխատանքները:

Ա. Հարությունյանը հարցրեց՝ չվճարվելու դեպքում ինչու՞ պետք է մասնագետները համաձայնվեն այդ աշխատանքը կատարել:

Ալ. Շագաֆյանը պատասխանեց, որ նախորդ փորձը ցույց է տվել, որ մարդիկ չեն խորշում, և նրանք նաև մոտիվացվում են, քանի որ առավել աչքի ընկած մասնագետներին տրվում է տեղեկանք, որը վերջիններս կարող են ներկայացնել տարակարգ ստանալիս: Հետագայում կտրվեն նաև պատվոգրեր և շնորհակալագրեր:

Ա. Հարությունյանը հայտնեց, որ ՀՀ ԿԳՄՍ-ն էլ այդ հարցով պատրաստ է մասնակցել լավագույն ուսուցիչների աջակցությանը՝ հանձնելով համապատասխան անվանակարգով պարգևներ:

Ալ. Շագաֆյանը շարունակելով ներկայացնել աշխատանքային ծրագրի հիմնական թիրախները, միջին մասնագիտական կրթության մասով որպես առավել հաճախ արձանագրվող խախտումների տեսակ, նշեց հաստատության խորհրդի աշխատանքի հետ կապված հարցերը: Արձանագրվում են բազմաթիվ խախտումներ կառավարման խորհուրդների գործունեության ոլորտում որոնք տնօրենների պատասխանատվության դաշտից դուրս գտնվելով, ավելացնում են հաստատության ռիսկայնության գործակիցը: Ստուգաթերթերի կիրառմամբ այս դաշտի վերահսկողություն իրականացնելիս խախտումներն արձանագրվում են, սակայն առկա է ևս մեկ խնդիր՝ ստուգման արդյունքում հայտնաբերված խախտումների հետևանքների վերացման պահանջ կառավարման խորհուրդներին տալ կամ չտալը դեռևս իրավական իմաստով հստակեցման կարիք ունի: Այս առումով 2020 թվականի գործունեության ծրագրով տեսչական մարմինը նախատեսում նոր գործիքակազմի մշակում:

Ա. Հարությունյանը նշեց, որ պետք է կիրառվի խորհրդի անդամի խորհրդի նիստերից 3 անգամ բացակայության դեպքում այդ մասին վերջինիս առաջադրող մարմնին գրավոր

տեղեկացման պրակտիկան, որպեսզի նրա անդամությունը կասեցվի և փոխարինվի նոր անդամով:

Ալ. Շագաֆյանը նշեց, որ խորհրդակցությունների ժամանակ այդ մասին տեղեկությունները տեղեկացվում են:

Ա. Բախշյանը հետաքրքրվեց, թե ինչ համամասնությամբ են ընտրվում ստուգումների ժամանակացույցում բարձր ռիսկային հաստատությունները:

Ալ. Շագաֆյանը նշեց, որ դա օրենքի պահանջ է, և որ ներկայացվող 2020թ. պլանում 28 նախկինում ստուգված հաստատություններից 7-ը 2018-2019 թվականի ստուգված հաստատություններն են, որոնք բարձր ռիսկային են, և օրենքը պահանջում է, որ հաջորդ տարի այդ հաստատություններում ստուգում իրականացվի: Նշվեց, որ 2020թ. նախատեսված է ստուգել 104 հաստատություն, և որ դրանցից 28-ն են, որ նախկինում երբևէ ստուգվել են:

Ավելացվեց նաև, որ 13-րդ հարցով ներկայացված է հայեցակարգը՝ Կրթության բնագավառի պետական վերահսկողությունը կարգավորող ՀՀ օրենսդրության թերությունների բացահայտման, կրթության բնագավառի հաշվետվողականության բարձրացման նպատակով անհրաժեշտ է ապահովել կրթության բնագավառի պետական վերահսկողությունը կարգավորող օրենսդրական հիմքերի առկայությունը՝ հաշվի առնելով բնագավառի բոլոր ոլորտների առանձնահատկությունները:

Ա. Ասոյանը հարցրեց՝ ստուգումների ծրագրում նշված 100 հաստատություններից բոլո՞րն են ստուգվել:

Ալ. Շագաֆյանը պատասխանեց, որ բացի 2 հաստատությունից մնացածը ստուգվել են, բացառությամբ Ա.Սեբաստացի բժշկական քոլեջի, որտեղ ստուգումը կասեցվել է, քանի որ կրթական ծրագիրը հավատարմագրված չէ, ինչը օրենքով պարտադիր է և ևս մեկ հաստատություն՝ Քասախի մանկապարտեզը, որտեղ իրականացվում էին վերանորոգման աշխատանքներ, և որի ստուգումը համայնքի ղեկավարի խնդրանքով տեղափոխվել է մյուս տարի:

Ա. Ասոյանը նշեց, որ այս տարի 4 տոկոսով ավելացվել է ստուգվող սուբյեկտների թիվը, դառնալով 104, սակայն անհրաժեշտ է, որ տարեկան շուրջ 500 հաստատություն ստուգվի 5 տարվա ցիկլը ապահովելու համար:

Ալ. Շագաֆյանը պատասխանեց, որ մեծ պատրաստակամությամբ 1000 հաստատություններում ստուգում կանեին, եթե աշխատակիցների թիվը բավարարեր:

Ա. Հարությունյանը հարցրեց, թե տեսչական մարմնում քանի ծառայող կարող է իրականացնել ստուգում: Ա Շագաֆյանը պատասխանեց, որ այդ ծառայողների թիվը 19 է՝ 12-ը հանրակրթության վարչությունում և 7-ը ՆՄՄԿ վարչությունում: Քանի որ օրակարգում նախապես ընդգրկված 12-րդ հարցով հաստիքացուցակում առաջարկվում էր անել փոփոխություն՝ ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման, վերլուծությունների և գնահատման և նախնական և միջին մասնագիտական (արհեստագործական) վարչություններից 1-ական աշխատակից տեղափոխել հանրակրթության վարչություն, ապա **Ա. Հարությունյանը** առաջարկեց 3 (երեք) տեսչական ծառայողի տեղափոխել ՆՄՄԿ վարչությունից հանրակրթության վարչություն:

Ալ. Շագաֆյանը պատասխանեց, որ մինչև տարեվերջ խորհրդին կներկայացնեն այդ առումով լրամշակված առաջարկ՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր ստորաբաժանման ներսում աշխատակիցների ծանրաբեռնվածությունը:

Ա.Հարությունյանը առաջարկեց քվեարկության դնել օրակարգի 5-րդ և 6-րդ հարցերը:

Խորհուրդը միաձայն՝ 8 կողմ ձայներով հաստատեց տեսչական մարմնի 2020 թվականի գործունեության և ստուգումների ծրագրերը:

Ալ. Շագաֆյանը տեղեկացրեց, որ օրակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ հարցերը նախորդ նիստին խորհրդի կողմից տրված հանձնարարականներ են: 1-ին հարցի հետ կապված ասվեց, որ ներքին կարգապահական կանոնները տեսչական մարմնի ղեկավարի հրամանով արդեն իսկ հաստատված են, և դրանց հետ կապված հաշվետվությունները կներկայացվեն որակի ապահովման ստորաբաժանմանը:

Ա. Ասոյանը ներկայացրեց իր նկատառումը այդ հարցի վերաբերյալ մեջբերելով՝ «Աշխատավայրում աշխատանքից բացակայությունը համարվում է հարգելի՝ 1) աշխատողի ամենամյա արձակուրդում գտնվելու, ծառայողական գործուղումների հետ կապված աշխատանքի վայրից դուրս այլ վայրեր մեկնելու, վերապատրաստման դասընթացներին գործուղվելու, անմիջական ղեկավարի կամ տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի կամ տեսչական մարմնի ղեկավարի հանձնարարությամբ հանդիպումների կամ այլ միջոցառումների մասնակցելու, ինչպես նաև՝ անձնական նպատակներով սույն կանոններով սահմանված դեպքերում», ավելացրեց որ ամենամյա արձակուրդում գտնվելը չի կարող դիտվել որպես հարգելի բացակայություն և առաջարկեց վերանայել այս հատվածը:

Ա. Հարությունյանը քվեարկության ներկայացրեց 1-ին և 2-րդ հարցերը:

Խորհուրդը միաձայն՝ 8 կողմ ձայնով ի գիտություն ընդունեց տեսչական մարմնի ներքին կարգապահական կանոնները՝ համապատասխան փոփոխությունների կատարման պայմանով:

Խորհուրը միաձայն՝ 8 կողմ ձայնով հաստատեց տեսչական մարմնին ներկայացված դիմում-բողոքների օրինակելի ձևը:

Ա. Հարությունյանը առաջարկեց անցնել օրակարգի 3-րդ հարցին՝ Տեսչական մարմնի (կրթության պետական տեսչության) գործունեության ոլորտում 2017-2019 թթ. հանրությունից ստացված դիմում/բողոքների թվաքանակի և բովանդակության փոփոխության պատճառների վերլուծություն:

Ալ. Շագաֆյանը նշեց, որ այս հարցը նույնպես խորհրդի հանձնարարականն է եղել որակի ապահովման ստորաբաժանմանը:

Ալ. Շագաֆյանը խոսքը փոխանցեց **Լ. Մաթևոսյանին** ներկայացնելու 3-րդ հարցը:

Լ.Մաթևոսյանը ներկայացրեց տեսչական մարմնի (կրթության պետական տեսչության) գործունեության ոլորտում 2017-2019 թթ. հանրությունից ստացված դիմում/բողոքների թվաքանակի և բովանդակության փոփոխության պատճառների վերլուծությունը՝ շեշտադրումներ անելով բացահայտված օրինաչափությունների և եզրակացությունների վրա: Ըստ այդմ, 2018 թվականին տեսչական մարմին ներկայացված դիմում-բողոքների մեծ թիվը գլխավորապես պայմանավորված է երկրում քաղաքական փոփոխություններով, մինչդեռ 2019 թվականին այդ դիմումների քանակի նվազումը 2018 թվականի համեմատ մեծ հաշվով օրինաչափ է,նմանատիպ պատկեր է ուսումնասիրված գրեթե բոլոր պետական մարմիններում:

Խորհուրդը 2017-19 թթ. հանրությունից ստացված դիմում/բողոքների թվաքանակի և բովանդակության փոփոխության պատճառների վերլուծությունը ընդունեց ի գիտություն:

Ա. Հարությունյանը առաջարկեց ներկայացնել օրակարգի 4-րդ հարցը՝ տեսչական մարմնի 2019 թվականի 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակների վերաբերյալ հաշվետվությունները:

Ալ. Շագաֆյանը նշեց, որ սա ևս նախորդ նիստի օրակարգի հարց էր, որ չէին քվեարկել և տեղափոխել էին այս նիստին և խոսքն ուղղեց Զ. Միքայելյանին, որպեսզի ներկայացնի հարցը:

Զ. Միքայելյանը ներկայացրեց 4-րդ հարցը՝ Տեսչական մարմնի 2019 թվականի 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակների վերաբերյալ հաշվետվություններ:

ՀՀ կրթության տեսչական մարմինը (ԿՏՄ) համաձայն 2019 թվականի տարեկան գործունեության ծրագրի **առաջին եռամսյակում մշակել է՝**

- *նախադպրոցական ուսումնական հաստատությունների ուսումնադաստիարակչական գործունեության գնահատման ձևաթուղթը,*
- *համայնքապետարանի կրթության հարցերով զբաղվող ստորաբաժանումում իրականացվող վերահսկողական գործընթացի ձևաթուղթը,*
- *նախադպրոցական ուսումնական հաստատության ծնողի հարցաթերթը,*
- *հանրակրթական ուսումնական հաստատությունների (դպրոցների) կրթության որակի բաղադրիչների գնահատման ձևաթղթերը,*
- *մարզպետարանի աշխատակազմի կրթության հարցերով զբաղվող ստորաբաժանումում իրականացվող վերահսկողական գործառույթի համար նախատեսվող ձևաթուղթը,*
- *հանրակրթական ուսումնական հաստատության ծնողի հարցաթերթը,*
- *հանրակրթական ուսումնական հաստատության սովորողի կողմից ուսուցչի գնահատման ձևաթուղթը:*

2019 թվականի **երկրորդ եռամսյակում փորձարկել է՝**

- *նախադպրոցական ուսումնական հաստատությունների ուսումնադաստիարակչական գործունեության գնահատման ձևաթղթերը և նախադպրոցական ուսումնական հաստատության ծնողի հարցաթերթը (ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի 6, ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի 3, Փարաքարի մանկապարտեզներ),*
- *հանրակրթական ուսումնական հաստատությունների (դպրոցների) կրթության որակի բաղադրիչների, հանրակրթական ուսումնական հաստատության սովորողի կողմից ուսուցչի գնահատման (ՀՀ Շիրակի մարզի 7 դպրոցներ) ձևաթղթերը և հանրակրթական ուսումնական հաստատության ծնողի հարցաթերթը,*
- *մարզպետարանի (ՀՀ Արագածոտնի մարզպետարան), համայնքապետարանի (ՀՀ Արարատի մարզի Մասիսի, ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարան) աշխատակազմերի կրթության հարցերով զբաղվող ստորաբաժանումներում իրականացվող վերահսկողական գործառույթի համար նախատեսվող ձևաթղթերը,*
- *«Դասավանդիր Հայաստան» ՀԿ-ի ներկայացուցիչների հետ համատեղ մշակված հանրակրթական դպրոցի դասալսման ձևաթղթերը (Երևան քաղաքի 5 դպրոցներ):*
- ***Ձևաթղթերը փորձարկման արդյունքում լրամշակվել են և սահմանված կարգով ներկայացվել ԿՏՄ խորհրդին՝ հաստատման:*** *Մշակվել է հանրակրթական դպրոցի տնօրենի զարգացման ծրագրի մշտադիտարկման ձևաթուղթը:*

2019 թվականի **երրորդ եռամսյակում ԿՏՄ-ն փորձարկել է**

- Մարզպետարանի (ՀՀ Լոռու մարզպետարան) աշխատակազմերի կրթության հարցերով զբաղվող ստորաբաժանումում իրականացվող վերահսկողական գործառույթի համար նախատեսվող ձևաթղթերը,
- հանրակրթական դպրոցի տնօրենի զարգացման ծրագրի մշտադիտարկման ձևաթուղթը (Երևան քաղաքի 5 դպրոցներ):
- **Ձևաթղթերը փորձարկման արդյունքում լրամշակվել են:**
- Մշակվել են ՀՀ կրթության բնագավառի պետական վերահսկողության հայեցակարգի և «Կրթության բնագավառի պետական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի նախագծերը:

Նախադպրոցական կրթության ոլորտ

- Մանկավարժական աշխատողների ընտրություն և նշանակում սահմանված կարգի պահանջների խախտումներով՝ 19 (79%) մանկապարտեզում 45 խախտում.
- Մանկապարտեզների խմբերում ընդգրկված երեխաների համար, որոնց տարիքները չեն համապատասխանում տվյալ տարիքային խմբին, չեն իրականացվել չափորոշչի համապատասխան որակական պահանջները՝ 13 (54%) մանկապարտեզներում.
- Մանկապարտեզը չունի կրթական ծրագրեր իրականացնելու լիցենզիա՝ 5(21%) մանկապարտեզում.
- ՀՀ ԿԳՄՍ նախարարի համապատասխան հրամաններով գրված նախադպրոցական կրթության լիցենզիայի հավելվածով համակազմի սահմանային թվերի խախտումներ՝ 16 (67%) մանկապարտեզում.
- Պակաս կամ չհատկացված հասարակային միավորներ՝ 18 (75%) մանկապարտեզներում.
- Հասարակության սաների զարգացնող միջավայրին ներկայացվող պահանջների չկատարում՝ 5 (21%) մանկապարտեզներում.
- Գերբեռնված խմբերի առկայություն՝ 6 (25%) մանկապարտեզներում.
- Հասարակության կանոնադրությունը չի համապատասխանում օրինակելի կանոնադրության պահանջներին՝ 16 (67%)մանկապարտեզներում.

Հանրակրթության ոլորտ

- Տնօրենը սահմանված կարգով չի իրականացրել մանկավարժական կադրերի ընտրությունը (համաձայն պաշտոնների անվանացանկի և պաշտոնի նկարագրի) 14 (78%) դպրոցներում 52 խախտում.
- Խախտվել են ուսուցչի թափուր տեղի մրցույթի կարգի պահանջները 12 (67%) դպրոցում 23 դեպք.
- Ուսուցիչն ընդունվել է դպրոց առանց մրցույթի 3 (17%) դպրոցում 5 խախտում.
- «Ֆիզկուլտուրա» առարկան դասավանդում է դասվարը՝ 2 (11%) դպրոցում.
- Դպրոցում երրորդ օտար լեզուն դասավանդվում է սահմանված կարգի խախտումով՝ 1 դպրոցում.
- Սովորողների ընդունելությունը դպրոց իրականացվել է սահմանված կարգի խախտումներով՝ 11 (61%) դպրոցում.

- Սովորողների ազատումը դպրոցից իրականացվել է սահմանված կարգի խախտումներով՝ 4 (22%) դպրոցում.
- Ուսուցչի խախտումներ՝ 4(22%) դպրոցներում.
  - Դասարանում սովորողների թիվը գերազանցում է ուսումնական պլանով սահմանված թվին՝ 4 (22%) դպրոցներում.
  - Խախտվել է դպրոցին տրված հանրակրթական ծրագրերով գործունեության լիցենզիայով սահմանված սովորողների համակազմի սահմանային տեղերի թիվը՝ 5(28%) դպրոցներում.
  - Դպրոցի կառավարման խորհուրդին վերաբերող խախտումներ՝ 9(50%) դպրոցներում.

<u>Նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտ</u>

- Խորհուրդը պատշաճ չի իրականացրել կրթության բնագավառը կարգավորող << օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունները, մասնավորապես, տնօրենի գործունեության նկատմամբ ընթացիկ վերահսկողությունը և (կամ) չունի աշխատակարգ, նիստերը գումարվել են սահմանված ժամկետների խախտումներով՝ 8(33%) հաստատություններում.
- Խորհրդի ուսանողական և (կամ) մանկավարժական կազմից անդամների լիազորությունների դադարեցումը և խորհրդի թափուր տեղի համալրումը իրականացվել է սահմանված կարգի խախտումներով՝ 17 (71%) հաստատություններում.
- Տնօրենը Խորհրդի քննարկմանը չի ներկայացրել հաստատության ուսումնական պլանները և առարկայական ծրագրերի նախագծերը՝ 5 (21%) հաստատություններում .
- Տնօրենը խորհրդի քննարկմանը չի ներկայացրել հաստատության ներքին գնահատման արդյունքների վերաբերյալ տեղեկանքը 6(25%) հաստատություններում.
- Կադրերի ընտրություն՝ 16 (67%)հաստատությունում 44 անձ.
- Ուսանողների ընդունելության գործընթացի խախտումներ՝ 18(75%) հաստատություններում.
- Ուսանողական իրավունքի վերականգնման գործընթացի խախտումներ՝ 16 (67%) հաստատություններում.
- Ուսանողի տեղափոխման գործընթացի խախտումներ՝ 9(38%) հաստատություններում.
- Ուսումնական խմբերում ընդգրկված են 25-ից ավել ուսանողներ՝ 2 (8%)հաստատություններում.

<u>**Վերահսկողություն**</u>

<< Արարատի մարզի Մասիսի, << Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանների աշխատակազմերի կրթության հարցերով ստորաբաժանումներ

- Մանկապարտեզների կանոնադրությունների հաստատումը, դրանցում համապատասխան փոփոխությունների կատարումը (Մեծամորի, Մասիսի համայնքապետարաններ).
- Մանկապարտեզների ղեկավար աշխատողների ընտրությունը, նշանակումը և պաշտոնից ազատումը (Մեծամորի թիվ 2 մանկապարտեզ).

- Մանկապարտեզների գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացումը ըստ ներկայացված տեղեկատվության՝ Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի կողմից լիարժեք չի համակարգվել և իրականացվել ոլորտում իրականացվող կրթադաստիարակչական աշխատանքների նկատմամբ պատշաճ վերահսկողություն.
- Մանկապարտեզների հաստիքացուցակները չեն համապատասխանում օրինակելի հաստիքացուցակի պահանջներին (Մասիսի, Մեծամորի համայնքապետարաններ).
- Վերահսկողությամբ ընդգրկվող ժամանակահատվածում համայնքապետարանների կողմից մանկապարտեզներում փորձարարական և նորարարական գործունեության կազմակերպում չի իրականացվել:

<< Արագածոտնի և << Լոռու մարզպետարանների աշխատակազմերի կրթության, մշակույթի և սպորտի վարչություններ

- մանկավարժների << հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձրլեռնային բնակավայրեր գործուղման,
- քաղաքացիների (մանկավարժների) նպատակային (համապատասխանությունը դպրոցի պահանջներին) ընդունելության,
- սովորողների՝ էքսպեռն կարգով ներկայացված փոխադրման,
- մարզային, հանրապետական և միջազգային օլիմպիադաներին մասնակցության կազմակերպման, դպրոցին, ուսուցչին, մասնակիցներին խրախուսման,
- ավարտական փաստաթղթերի տրացման, պահպանության, բաշխման,
- դպրոցների անվանակոչության,
- քաղաքացիների՝ կրթության բնագավառին առնչվող առաջարկությունների, դիմումների և բողոքների սահմանված ժամկետներում քննարկման,
- այլ երկրների, այլ մարզերի (Երևան քաղաքի), փվյալ մարզի դպրոցներից սովորողի ընդունելության հաշվառման,
- դպրոցական տարիքի երեխաների հաշվառման,
- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հաշվառման գործընթացները:

Հարց հնչեցրեց **Ա. Բախշյանը** Աշտարակի ուսումնարանի հետ կապված, որ տվյալ աշխատակիցը չի եկել աշխատանքի և ստորագրել է, և որ տեսչական մարմինն էլ իր տեղեկանքում գրել է, որ այո կա ստորագրություն, ի՞նչ է դա:

Ալ. Շագաֆյանը ասեց, որ տեսչական մարմինը արձանագրել է ստորագրությունների

առկայության փաստը, իսկ մնացած հարցերի պարզաբանման համար գործը փոխանցվել է իրավապահ մարմիններին:

Ա. Հայրապետյանը հարցրեց՝ թե արդյոք աճի միտում կա, որ հայոց լեզվի ուսուցման մակարդակը լավացել է:

Զ. Միքայելյանը պատասխանեց, որ այո, դրական փոփոխություն կա:

Ա. Հարությունյանը ասեց, որ 2018 թվականի հետ համեմատությունը կա արդյո՞ք:

Զ. Միքայելյանը պատասխանեց, որ տարեկան հաշվետվության մեջ դա կլինի:

Ա. Բախշյանը հարցրեց քանի հանձնարարական է, ու՞մ ինչքան է տրամադրվում:

Զ. Միքայելյանը պատասխանեց, որ ըստ եռամսյակների այդ թվերը նշված են: Խորհուրդը առաջարկեց 4-րդ հարցի զեկուցումն ավարտելուց հետո հակիրճ ներկայացվի հարց 7-ը՝ երրորդ եռամսյակի դիմում բողոքների հաշվետվությունը: Զ.Միքայելյանը հակիրճ ներկայացրեց հաշվետվությունը՝ հիմանական թվերով և օրինաչափություններով:

Ա. Հարությունյանը առաջարկեց **4-րդ և 7-րդ հարցերը** քվեարկել:

Խորհուրդը միաձայն՝ 8 կողմ ձայնով հաստատեց օրակարգի 4-րդ և 7-րդ հարցերը՝1-ին, 2-րդ, 3-րդ եռամսյակների գործունեության և 3-րդ եռամսյակի դիմում-բողոքների հաշվետվությունները:

Ա.Հարությունյանը տեսչական մարմնի որակի ապահովման ստորաբաժանման ղեկավարին առաջարկեց ներկայացնել **օրակարգի 8-րդ հարցը:**

Լ. Մաթևոսյանը հակիրճ ներկայացրեց 8-րդ հարցը՝ **որակի ապահովման ստորաբաժանման գործունեության 2020 թվականի ծրագիրը:**

Ա. Ասոյանը առաջարկեց ներկայացնել 2019թ.-ի և 2020թ.-ի գործունեության ծրագրի տարբերությունը:

Լ. Մաթևոսյանը նշեց, 3 ավելացում՝

1. մշակել որակի ապահովման ստորաբաժանման ներքին հսկողական գործառույթի բոլոր ուղղությունների վերաբերյալ տվյալների բազայի կառուցվածքը, հավաքել համապատասխան տեղեկություններ, կիրառել բացառապես տվյալների վերլուծության հիման վրա որոշումների կայացման մոտեցումը.

Նման մոտեցումը հնարավորություն կտա նպաստել բոլոր շահակիցների շահերի գնահատման առավել արդյունավետ և կիրառական որոշումների մշակմանը և կայացմանը: Որակի ապահովման ստորաբաժանման ներքին հսկողական գործառույթի բոլոր ուղղություններին համապատասխան տեղեկությունների տիրապետումը հնարավորություն

կտա համապատասխան գործընթացը դիտարկել բազմակողմանի, ինչպես նաև՝ ստանալ հետադարձ կապ, որի վերլուծությունը կստեղծի հետագա բարելավման ու զարգացման հնարավորություններ՝ էլ ավելի նպաստելով որակի ապահովմանը:

2. վերանայել և բարելավել որակի ներքին ապահովման գործընթացներին ներքին և արտաքին շահակիցների մասնակցության մեխանիզմները՝ առավել մեծացնելով նրանց ընդգրկվածությունը.

Ստորաբաժանումը կարևորում է որակի ապահովման գործընթացում իր ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը: Տեսչական մարմնի աշխատողների, ստուգման ենթարկված օբյեկտների լիարժեք մասնակցությունը որակի ապահովման գործընթացներին համակարգի արդյունավետության հիմնական երաշխիքներից է: Տարբեր գործընթացներին նրանց մասնակցության ապահովումը հնարավոր է մի շարք ձևերով՝ գործունեության արդյունավետության վերաբերյալ հարցումներ, տեսչական մարմնի աշխատանքի վերաբերյալ ստուգման ենթարկված օբյեկտների բավարարվածության հարցումներ, ինքնագնահատման գործընթացներ և այլն:

3. ներքին և արտաքին շահակիցների համար մշակել որակի ապահովման ստորաբաժանման գործունեության վերաբերյալ օբյեկտիվ տեղեկության ստացման և գնահատման ընթացակարգերի վերաբերյալ թափանցիկություն ապահովող մեխանիզմներ.

Տեսչական մարմնում որակի ապահովման գործունեության, իրականացվող ծրագրերի և գործընթացների վերաբերյալ հաշվետվողականությամբ հնարավոր է ապահովել թափանցիկություն ներքին և արտաքին շահակիցների համար: Արտաքին շահակիցների համար տեղեկության ապահովման միջոց կարող է լինել տեսչական մարմնի կայքը, իրականացվող ինքնավերլուծությունները, իսկ ներքին շահակիցների համար՝ ոչ միայն կայքը և իրականացվող ինքնավերլուծությունները, այլ նաև՝ այլ ստորաբաժանումների հետ որակի ապահովման ստորաբաժանման գործունեության, իրազեկման և լուսաբանման գործընթացները, ինչպես նաև ընթացիկ հաշվետվությունները:

Ա. Հարությունյանը առաջարկեց 8-րդ հարցը դնել քվեարկության:

Խորհուրդը միաձայն՝ 8 կողմ ձայնով հաստատեց տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի 2020 թվականի գործունեության ծրագիրը:

Ա. Ասոյանը առաջարկեց քվեարկության դնել օրակարգի 10-րդ և 12-րդ հարցերը:

Ա. Հարությունյանը հիշեցրեց, որ 12-րդ հարցի վերաբերյալ խորհուրդը տեսչական մարմնից ակնկալում է լրամշակված առաջարկ՝ մասնավորապես տեսչական մարմնի ՆՄՄԿ վարչությունից հանրակրթության վարչություն 3 մասնագետի տեղափոխման հնարավորության հետ կապված:

Ա. Շագաֆյանը վերահաստատեց, որ մինչ տարեվերջ լրամաշակված առաջարկը կներկայացվի խորհրդին:

Այնուհետև **Ա. Հարությունյանը դրեց քվեարկության 10-րդ հարցը՝ խորհրդի աշխատակարգը և 12-րդ հարցը՝ հաստիքացուցակի փոփոխությունը:**

Խորհուրդը միաձայն՝ 8 կողմ ձայնով հաստատեց օրակարգի 10-րդ և 12-րդ հարցերը:

Խորհուրդը միաձայն որոշեց.

1. **Ի գիտություն ընդունել** Կրթության տեսչական մարմնի ներքին կարգապահական կանոնները՝ համապատասխան փոփոխությունների կատարման պայմանով:
2. **Հաստատել** տեսչական մարմին դիմում-բողոքների ներկայացման օրինակելի ձև:
3. **Ի գիտություն ընդունել** որակի ապահովման բաժնի կողմից ներկայացված 2017-2019 դիմում-բողոքների քանակի և բովանդակության վերաբերյալ վերլուծությունը:
4. **Հավանություն տալ** տեսչական մարմնի *1-ին, 2-րդ, 3-րդ եռամսյակների գործունեության և 3-րդ եռամսյակի դիմում-բողոքների* հաշվետվություններին:
5. **Հաստատել** տեսչական մարմնի *2020 թվականի գործունեության* և *սպուգումների ծրագրերը:*
6. **Հաստատել** տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի 2020 թվականի գործունեության ծրագիրը:
7. **Հաստատել** տեսչական մարմնի կառավարման խորհրդի աշխատակարգը:
8. **Հավանություն տալ** տեսչական մարմնի հաստիքացուցակի փոփոխության առաջարկը լրամշակման և մինչև տարեվերջ խորհրդին ներկայացման պայմանով:
9. Օրակարգի 11-րդ և 13-րդ հարցերը քննարկել խորհրդի հաջորդ նիստին:

Խորհրդի նախագահ՝ Ա.Հարությունյան

Խորհրդի քարտուղար՝ Ա.Գևորգյան